ԱՌ ԸՆԹԵՐՑՕՂՍԴ

Շնորհիւ և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ մատեանս Աստուածաշունչ բազմաւ աշխատութեամբ կարգաւորեցաւ՝ գլխադրութեամբ և տնատութեամբ ըստ Դաղմատացւոցն. նաև ցանգով և համաձայնութեամբ։ Քանզի համաձայնութիւն բովանդակից մատենից ըստ սրբոյ աւետարանին, առ մեզ ոչ գտանին, այլ առ Դաղմատացիսն միայն. թէպէտ առ մեզ ևս գտանին, ի Դաղմատացւոց թարգմանեալ։ Որպիսի է Աստուածաշունչն Ղազարու Վարդապետի Վալաքացւոյ և որք ի նմանէ գաղափարեալք են ներ քաղաքում Շօշում, այնք ևս ծայրատեալք և աղարտեալք ի գրչաց։ Բայց ես նուաստս յամենից և յետնեալս անձամբ և գիտութեամբ ի մէջ մանկանց եկեղեցւոյ Տէր ոսկանս բանի սպասաւոր, յերկրէն Արարատու ի գիւղաքաղաքէն Երևանայ՝ հրամանաւ հաւոյն Հայոցն և Կաթուղիկոսին տեառն Յակորու՝ եկեալ յԱմսդերտամ ձեռնարկի մատենոյս աստուածայնոյ։ Զգլխատեալսն ի նախնեաց՝ ես ևս տնատեցի ըստ Դաղմատացւոցն. զթիւսն, և զհամաձայնութիւնսն առադրեցի մի ըստ միոջէ՝ որպէս էր հնար. քանզի ո՛չ ամենեւին, և ամենայն իրօք միաբանեցան. այլ ի տեղիս յոլովս տարաձայնեցան գլխով և տամբ՝ ոմանք յետ և յառաջք՝ ոմանք թերիք և աւելորդք. որոց յարմարումն ընդ իրեարս կարի դժուարաւ եղեւ, և բազմաւ ջանիւ։ Որպէս է տեսանել ի գիրս Մովսէսի, Յեսուայ, Թագաւորութեանցն. մանաւանդ ի գիրս Եսթերայ. Եզրասայ. Տուրիթայ. Սաղոմոնի, Դանիէղի և այլոց։

Որք են այպիսիք տարաձանութիւնք։ Նախորդն դրութիւն գլխոց և տանցն։ Երկրորդն գոլն և ոչ գոլն գրոցն գլխոց՝ և տանց թէ առ մեզ՝ և թէ առ նոսա։ Երրորդն, գլխոց և տանց առաւելութիւն և նուազութիւն։ Չորրորդն, գլխոց և տանց յետ և յառաջ լինիլն։ Հինգերորդն. բանիցն այլատարաղութիւնք, և շաղփաղփութիւնք։ Վեցերորդն վասն մերոյն ցանգոյ և նախադրութեան։

Նախորդն, որ է դրութիւն գլխոց և տանց. ո՛չ է յամենայն ուրեք ըստ կարգի շարակարգեալ՝ այլ խառն ի խուռն. քանզի ուրանօր էին համեմատք շարակարգեալք իրեարաց, մեք ևս ըստ այնմ շարի զթիւսն յարդարեցաք. իսկ ուրանօր ոչ էին համաձայնք և յարմարք, զնոյն ևս խառն ի խուռն կարգեցաք։ Ըստ գլխոյ դունուրեք գտանին, միայն ի դիրս եզրասայ. Եսթերայ. նաև ի գիրս առակացն Սաղոմոնի. և Դանիեղի։ բայց ըստ տանց նամենեսեան գիրս գտա-

նին, դունուրեք համաբան ընթանան։ Թէպէտ ի մատեանս Նորոց Կտակարանաց սակաւք գտանին այլատարազք, որպէս քաջամիտ ընթերցողաց բացապէս երևի։ Արդ այսոցիկ այսպէս գոլով, ոչ զմերոյն շարադրութիւն բնաբանի կարացաք խախտել, և ոչ զնոցայն գլխոյ թիւ և տանց. քանզի թէ զթիւ գլխոցն խախտէաք՝ կամ տանց, ընդ նոսին հարկ լինիւր և զթիւ համաձայնութեանցն փոխել՝ և զթիւս ցանգոյն, որ էր անտանելի գործ. վասն որոյ այսքանս հնարեցաք հազիւ։ Ըզմերայինն շարադրութիւն անխախտ պահել. և զգլխատութիւնս և զտնատութիւնս ըստ թուոյ նոցա յորինել, որպէս ահա տեսանես ի գիրս Եսթերայ, Եզրասայ, Սաղմոսաց, Դանիէղի. և այլոց։

Երկրորդն է գոլ գրոցն և ոչ գոլ՝ առ մեզ և առ նոսա։ Քանզի առ նոսա գոն գիրք Յեսուայ Որդւոյ Սիրաքայ կատարելապէս ընկալեալ ըստ այլոց Աստուածաշնչոց գրոց՝ տնահամարով գլխով և համաձայնութեամբ փակեալ. զոր և ես ըստ իմում կարի թարգմանեալ յօրինեցի ըստ դադմատացուցն. քանզի մեզ ո՛չ գոյր լիապէս, այլ ծաղկաքաղ արարեալ։ Նաև Ստեփաննոս Վարդապետն Պոլսոնացի թարգմանեալ և առաքեալ ըստ խնդրոյ մերոյ, բայց ոչ ժամանեաց մեզ յօգնութիւն, այլ զկնի ամի միոյ։ Նաև զՉորրորդ Գիրս Եզրասայ որ մեզ ոչ գոյր ներ մատենից Աստուածայնոց. այլ միայն ի գրչարկս Սաղմոսավանից՝ զայն ևս ծայրաքաղ արարեալ. նոյնպէս և զայն գիր ի հայս բարբառ արտալածեալ շարադրեցի։ Նաև զցանգս Աստուածաշնչին։ Բայց այս Չորրորդս Եզրաս առ նոսա ևս երկբայս գոլով ոչ ունի զհամաձայնութիւնս, և ոչ ի տեղւոջ իւրում, այլ ի վերջոյ եդեալ ընդ Եզրասայ երրորդի։ Իսկ Եզրասն՝ որ է առ Դաղմատացիս երրորդ՝ առ մեզ առաջին էր կարգեալ՝ ես ևս ըստ մերոյ առաջին կարգեցի, փոխարկելով զթիւ համաձայնութեանցն ներ ցանգոյն, և ի լուսանցսն։ Բայց կարի աշխատանք եղեւ։ Սակայն Երրորդ Գիր Մակաբայեցւոցն սակս առ նոսա ոչ գոլոյն ես ևս ըստ մերոյն որպէս էր եղեալ թարց գլխոյ և համարոյ՝ եդի։

Երրորդն է գլխոց և տանց առաւելութիւն և նուազութիւն. զսոսա ևս ի գիրս Եսթերայ, Տոբիթայ. Դանիէղի և այլոց բազմաց գտցես. որք ի ձեռն համարութուցն բացայայտնին։ Քանզի որք ի մեզ պակասք գոն, զթիւսն նոցին ևս եմք թողեալ՝ ուրանօր տեսանես զերեք կամ զչորս համարն գրեալ՝ և զայլսն ըստ կարգի. և ի մէջ այնոցիկ համարոցն, թուով միով կամ էրկոքումբք. կամ ևս յոլովիւք ի բացթողեալ՝ որ քան թիւ ոչ գտցի այնքանով թուով զմերն պակաս լեալ իմա։ Նոյնպէս և զաւելեալն ի մեզ՝ յորժամ տեսանիցես բազմաւ տողով ոչ տնատեալ. գիտասցես թէ այնքան բանն աւելորդ է առ մեզ. մանաւանդ զի ըղնգնաձեւ նշանս լատինացուց եղաք ի մէջ, որքանք պարունակին ներ այնց ըղնգնաձեւոց նշանացն, թէ բառ, թէ բան, այնքանքն են աւելորդք, և առաւելեալք քան ղլատինացուցն, որպէս գտանես ի գիրս Թագաւորաց, Եսթերայ, Առակացն. և այլոց։ Բայց գոն ևս յայնց նշանացն, որք ըստ լատինացուցն են եդեալք։

Չորրորդ՝ գլխոց և տանց յառաջ և յետ գոլն։ Քանզի գոն գլուխք ի գիրս Եսթերայ և Սաղմոսնի, և այլոց. որոց կէսն աստ, և կէսն յայլում վայրոջ է գրեալ. նաև տասնեմէկն. յառաջ է գրեալ և մինն յետոյ։ Երեսուն յառաջ է գրեալ և քսանեհինգն յետոյ. տասնեւերեք յառաջ է և մինն յետոյ. նոյնպէս և տանցն գոն յետև յառաջութիւնք, զորս զամենեսեան ներ տեղւոջ իւրեանց գտանել մարթանայք։

Բայց Երրորդ Մակաբայեցին, որ ոչ գոյ լատինացուց, ոչ տնատեցաք. քանզի զցանգն եդեալ են. և ի մէջ բնաբանին գլխահամար ոչ են կարգեալ. զի ընդ ցանգոյն համեմատեալ տնատեալ էաք, թէ լաւ, և թէ վատ։ Վասն այնորիկ՝ այնպէս անգլուխ և անհամար տպեցաք։ Այսպէս և այլքն, գլխահամարք բնաբանին ընդ համարոյ ցանգոյն ոչ համաձայնին ամենայնիւ և ամենայն ուրեք, այլ դուն ուրեք, որովք համարօք և ցանգօք անկարելի էր զհամաձայնութիւն յօրինել։ Վասն որոյ զայսքանս հնարեցաք՝ զի որքանք գլուխք տարանջատեալք էին ի միմեանց՝ և կամ յետև յառաջ էին ընդ լատինացուցն. այնց ի կրկին տեղւոջ զգլուխ կարգեցաք, և զտնաթիւսն ըստ կարգի եդաք. զի ի ձեռն գլխաթուցն. և տանց թուցն մարթասչիք, և զհամաձայնութիւնսն, և զթիւս ցանգոյն ի տեղիս իւրեանց հաւաստեաւ զտանել։ Այսինքն կրկին երեսունեմէկ. և կրկին մետասան։ Բայց զմանրաթիւսն ըստ կարգին գտանես յերկոսին տեղիս։

Հինգերորդ՝ անուանց և բանից շաղփաղփութիւն և շաղակրատութիւն, զի զմի և գնոյն անուն ի բազում տեղիս բազմադիմիք են եդեալք։ Զայնս ոչ ասեմ, որոց այլևայլ անուանակոչութիւն է հանդիպեալ. որպէս Գէդէօնի, և Սեդեկիայի, և այլոց յոքունց. այլ զայնս, որք միևնոյնք են ի բազում տեղիս բազմադիմիք են դրեալք։ Նոյնպէս և շարադրութիւնք յոլովք գոն աղճատեալք. որք ամենևին զտեսութիւն իրի ոչ յայտնեն. այսպիսեացս ըստ կարի հոգ տարեալ ուղղեցաք. ոչ բնաւին, զի մի ի պարսաւադիտաց եպերիցիմք, այլ զոմանս։ Նաև զոր ոչ իշ-

խեցաք փոխարկել՝ կամ բառնալ ի լուսանցսն նոտրու գրով եդաք. զի ճշմարտասէրքն և վերահասուքն տեղեկասցին, և մտադիրք լիցին։ Իսկ որք ոչ կարի տարանջատք երևեցան, և կամ տարանջատք ելով այլով կերպիւ զայլ իմն զբան նշանակեցին. զայնս ոչ խախտեցաք՝ և ոչ ի լուսանցսն գծագրեցաք։

Վեցերորդ վասն ցանգոցն և նախադրութեանցն նախնեաց. զորս շարակարգել անճահք թուեցան. մի զի համար սորին ոչ է այնու ցանգով. և ոչ տնատութիւնքն. և ոչ համաձայնութիւնքն։ Երկրորդ՝ զի տուին կարի ստուար գայր՝ և ծախն յոլով. որոյ աշխատանքն և ծախն դիտաւորութեան ոչ արժէին. քանզի դիտաւորութիւն դնելոյն, ո՛չ այլ ինչ էր՝ եթէ ո՛չ այս միայն, զի նախնեացն վաստակ մի բարձցի. իսկ օգտութիւն և ոչ ծղի միոյ գոյր։ Մանաւանդ զի ներ բնաբանիցն այնչափ տեղի չեղև զի ընդ Դաղմատացւոց համարոյն զմերն ևս էաք եդեալ. թարց բնաբանի համարոյն ղցանգսն գնել անհեթեթ էր։ Երրորդ՝ զի և համար ցանգոյն ընդ համարոյ գլխոց բնաբանին էր անպատկան եդեալ սղալելով գրչաց։ Չորրորդ՝ զի համար գլխոցն ի բնաբանսն՝ է ուրեք զի եդեալ է՝ և է ուրեք զի ոչ է եդեալ . նաև եդեալքն ի տեղիս յոլովս անհամաձայնք են եդեալք ընդ ցանգոյն։ Սակս այսքանաց պատճառաց ոչ եդան նախադրութիւնքն և ցանգքն առաջինք։ Իսկ ղկարգեալսն և ղեդեալսն ի փառս Քրիստոսի ընկալարուք. և ղմեզ ի մեղադրանաց անպարտ արարէք։